

կան և նրանց մէջն է բաժանուած մեր ինտելիգէնցիան ու այդ խմբերի դէպ իրար ունեցած յարաբերութիւնն է պատճառը, որ ինտելիգէնցիան, ուր նա բազմաթիւ է, ինչպէս օրթիֆիլիս, Բագու, Ռոստով-Նախիջևան, Պետերբուրգ ու Մոսկուա, ոչինչ նշանաւոր, ոչինչ իր միացած ուժին արժանի գործ արած չէ, այլ անգամ նոյն պատճառներից հետևում են այնպիսի յարաբերութիւններ, ինչպէս որ եղան Եկմալեանի ու իր դասատու ընկերների մէջ. յարաբերութիւններ, որոնք ստորացնում էին մարդկային արժանաւորութիւնը Եկմալեանի մէջ ու պատճառած էին մեր խեղճ գործչին ահագին բարոյական տանջանքներ:

Իհարկէ, զարգացումը ամրապնդուելով հասարակութեան մէջ, դառնալով բազմակողմանի ու ստեղծելով լայն կարծիքների ու հայեացքների մարդիկ, կը ոչնչացնի մեր մէջ այդ նեղ կուսակցական յարաբերութիւնները մեր ուսում առած, բայց դեռ չկրթուած հասարակութիւնից, իսկ որպէս զի մենք ունենանք կրթուած և լայն հայեացքներով հասարակութիւն, դրա համար հարկաւոր է մի քանի սերունդ: Առանձին մարդիկ այդ գաղափարներով տոգորուած, շնորհիւ իրանց ընդունակութիւնների, իրանց տոկուն պարապմունքների՝ կան ու կլինին, բայց մեր այժմեան ուսում առած հասարակութիւնը այդպէս չէ. նա ներողամիտ չէ ուրիշի կարծիքներին. նրա մէջ լայն հայեացքները, որոնք կարող են հաւաքել շատերին ու գործել տալ միասին—խոր արմատ չունի և այդ է պատճառը, որ մեր ինտելիգէնցիան իր միացած ոյժերով շատ քիչ բան է արել թէ մեր կրթական գործում և թէ մեր ժողովրդի տնտեսական դրութիւնը բարձրելու մէջ:

Շատ ցանկալի կլինէր, որ շուտով հրատարակուէր Եկմալեանի մի լաւ կազմած կենսագրութիւն:

*

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՄԻՑ

5 Մայիս 1905

. . . Տէր Խմբագիր «Լոււմայ» պատուական ամսագրի

Մնդակցութեամբ ողջունելով «Լոււմայ»-ի իբրև ամսագիր քի լոյս ընծայումն, կը մաղթեմ անխոնջ աշխատասիրողիդ և հրատարակչիդ կարողութիւն, և բոլոր ձեռնարկութեանցդ և գործոցդ յաջողութիւն և յարատևութիւն:

Այս անգամ «Լուսալուս»-ի թիւ 2 գրքի մէջ ընթերցայ մի Պատմական ակնարկ Ներսէս Ն-ի մահուան առթիւ, ստորագրութեամբ բժ. Արամեանի՝ որ իմ ուշագրութիւնս գրաւեց թէ նիւթին հետաքրքրականութեամբ և թէ հանրածանօթ ստորագրողին վեր երևամբ հրապարակի վերայ. յորմէ ժամանակէ մի վեր զրկուած էի գէթ ես, որ բժ. Արամեանցի սուր, ստոյգ, ուղիղ և համեստ գրչութեան ծանօթ եղած եմ, երբեմն նաև սիրալիր թղթակցութեամբ:

Պ. Արամեանց կարգալու «Լուսալուս»-ի մէջ (1904 թ. 5 էջ 176) Սարգիս արքեպիսկոպոս Զալալեանցի գրած մի նամակի պատճէնն առ Յ. Խալիբեան՝ որ կը նկարագրէ ի Տէր հանգուցեալ մեծահոգի Ներսէս Ե. կաթողիկոսի մահուան պարագաներն, այն եղբակացութեան յանգած է, թէ Սարգիս եպիսկոպոսի վրայ եղած կասկածներն իբրև թունաւորիչ և պատճառ մահուան Մեծ Հայրապետին անհիմն էին և անտեղի, և Զալալեանի այդ նամակն ամեն տարակուսանքի և կասկածանքի մշուշն փարատած:

Այդ մասին իմ մասնաւոր կարծիքն համաձայն կը գտնուի առ այժմ այդ նամակն հրապարակ հանողին՝ յարգելի բանասէր պ. Ե. Շահազիզեանի կարծեաց, այսինքն թէ դժուարանում եմ հաւատալ մի ծերունագարդ Հայրապետի թունաւորումն իւր ամենամօտ մարդու մի երախտաւորեալ եպիսկոպոսի ձեռամբ, բայց և այնպէս խնդիրը մշուշապատ է, և կը կարօտի մի աւելի որոշ գրաւոր յիշատակարանի:

Թունաւորման այդ շարագուշակ լուրը հակադիրսասականներէց եկած էր Պօլիս, և 1860-ին հրատարակուած Ազգային պատմութեան մի դասագրի մէջ մուտ գտած, և հետևաբար թուրքահայերի մէջ տարածուած էր արդէն. երբ քան զամենն առաւել համոզիչ և հաւանական թուեցաւ, Ռուսահայոց ևս յոյժ ծանօթ մի բանասիրի Մարկոս Աղաբէկեանի Ծիլն Աւարայրի անուն թերթին մէջ 1866—67-ին գրուած երկար յօդուածներէ շարքում Զալալեանի մասին շատ աննպաստ տեղեկութիւններն, որ իբրև ոճրագործ ոմն կը ներկայացունէին զայն:

Զարմանալի է որ այդ ժամանակամիջոցում ոչ ոք համարձակեցաւ պաշտպանել զԶալալեան, ոչ պաշտօնական և ոչ անպաշտօն եղանակաւ, և գործը հասարակաց դատողութեան մըշուշին մէջ մնաց թեր ու դէմ կասկածանօք: Տարակուսական է յարգելի բժ. Արամեանցի ասածը թէ՛ Զալալեան բողոքած է Կ. Պօլսոյ Պատրիարքին, ընդդէմ վերոյիշեալ Ազգային պատմութեան դասագրի մէջ եղած հրատարակութեան, և դատաս-

տան պահանջած, և կը յաւելու թէ՛ ընս այժմ չեմ յիշում թէ ինչպէս վերջացաւ այդ դատաստանը, բայց իմ խորին համոզմամբ դատաւորները միաբերան արդարացրած պիտի լինէին Ջալալեանին»։ Եւ այս ասածին ապացոյց կը համարի զայն՝ թէ Ջալալեան 1868-ին իբրև հրաւիրակ նորընտիր կաթողիկոս Տ. Գէորգ Դ-ի Կ. Պօլիս եկած ատեն՝ մեծ պատիւ և ընդունելութիւն գտած է Պօլսում։

Նախ հարկ կը համարիմ ճշտել թուականը Սարգիս արքեպիսկոպոսի Կ. Պօլիս եկածին, որ ոչ թէ 1868-ին, այլ 1867 թուականին է, և փետրուարի 13-ին գալով մարտի 28-ին մեկնած է նորընտիր կաթողիկոսին հետ. և արդարև պատուով և յարգանք ընդունելութիւն եղած է իրեն ամեն դասակարգի Ազգայիններէ, և արժանացած Կայս. Մէճիտիէ ք. պատուանշանին։ Իայց այս քաղաքավարի եղելութիւնք՝ չեն կարող հետևանք նկատուիլ այնմ, որպէս թէ միաբերան արդարացրած լինէր իւր դատաւորներէց, որովհետև ոչ բողոքող եղած է Պատրիարքին և ոչ դատաստան։ Այդպիսի դատաստան տեղի ունենալու համար, կարծեմ օրէնք է որ ամբաստանեալ և դատախազ ներկայացած լինին դատաւորական Ատեանին, որով կարելի լինի միաբերան վճիռ տալ արդարութեան կամ դատապարտութեան։ Չկայ այդպիսի բան։

Ջալալեանի վերայ եղած չարախօսութիւնները 1857-ի փետրուարէն կսկսի, յետ վախճանի Ներսէս կաթողիկոսի։ Հիւսիսափայլ ամսաթերթը արձագանք եղաւ այդ չարալուրին, բայց Ջալալեան եպիսկոպոս ոչ երբէք կարևորութիւն տուած էր, և մինչև իսկ Ներսիսեան վարժարանի աշակերտք ազատ արձակ կը կարդան եղեր այդ թերթերը՝ ինչպէս կը վկայէ բարեկամս պ. Արամեան, և Ջալալեան գիտնալով և տեսնելով զայդ, ոչ դիտողութիւն և ոչ բողոք արած է, անշուշտ մտաբերելով այն առածը, թէ՛ «Պողալի ծառին քար նետող շատ կը լինի»։—Ուրեմն ինչպէս կարելի համարիմք թէ՛ երեք տարիներ անցնելէ յետոյ՝ 1860-ին տպուած մի դասագրքի մէջ իւր անունն աղարտուած տեսնելով բողոք յարուցած լինի Պատրիարքին, և դատաստանաւ արդարացած։ Այդպիսի եղելութիւն իմացած չեմք։

Այլ սակայն կայ մի իրողութիւն, յորմէ թերևս անտեղեակ մնացած է պ. բժ. Արամեանց։ 1867 թուականի վերջերը մի տետրակ հրատարակ ելաւ ի Պօլիս ի տպարանէ Մասեաց (Մասիս լրագրի) այս վերտառութեամբ՝

Շնամակ Տ. Սարգսի արքեպիսկոպոսի Ջալալեանց, գրեալ

առ Յարգոյ Ազգային ոմն ի Կ. Պօլիս»։ Այդ ութածալ տետրակը 99 էջով, կսկսի «օրհնեալ սիրելի» բառերով, որոյ հով լինելը չիմացուեցաւ, և կարծուեցաւ միայն՝ թէ Չամուրճեան պատուելին լինելու է։ Իսկ պարունակութիւնը ծայրէ ի ծայր ինքնապաշտպանութիւն է ընդդէմ իւր վրայ եղած չարախօսութեանց, թուելով մի առ մի իւր մատուցած ծառայութիւնքն յօգուտ Մայր Աթոռոյ և Ազգի, և զբաւոր ապացոյցներ ներսէս Ե. կաթողիկոսի գոհունակութեանցն առ իւր անձն, և իւր անձնանուէր վերաբերումն առ նա և առ Ս. Եկեղեցին Հայաստանեայց և ապա գանգատանք ընդդէմ Տ. Մատթէոս կաթողիկոսի ընթացից, և այլ տեղեկութիւնք, և ունի թուական 5 մարտի 1865, գրեալ Սանահնի վանքէն։

Իմ կարծիքն այնէ թէ՛ այդ տետրակն որ Զալալեանցի Կ. Պօլսէն մէկնելէն իբր վեց—եօթն ամիսներ յետոյ երևան ելաւ ի Պօլիս 1867-ին, իւր բարեկամաց խորհրդովն հրատարակութեան արուած է «ի բուժումն գայթակղեալ մտաց»։ Որովհետև որչափ որ պատիւ և յարգանք կընծայուէր. Զալալեանց Արքեպիսկոպոսին ի մեծամեծաց եկեղեցականաց և աշխարհականաց, անդին ժողովրդական խումբ մի կար միացած ուսումնական երիտասարդների և խոհական անձնաւորութիւնների հետ, որք կասկածանօք կը վերաբերուէին Զալալեանի անձին, և անհամողելի կը մնային իրենց կարծեաց վերայ։

Արդ՝ եթէ Մարգիտ Արքեպիսկոպոս Զալալեանցի 1857 թուին առ Նալիրեան գրած նամակը կարող կը լինի փարատել մշուշը կասկածաւոր խօսքերէ, ուրեմն այս տպագրեալ նամակն 1865 թուականի, առաւել ևս պիտի ցօլացնէ լուսոյ նշշոյլներ ի ցրումն մթազին տարածայնութեանց ըստ բարենպատակ կարծեաց պ. Արամեանցի. և անս այս պատճառաւ այդ տետրակէն մի օրինակ հանելով իմ գրադարանէն կուղարկեմ Ձեր սիրելի եղբայրութեան, խնդրելով որ դուք կարգալէ յետոյ ուղարկէք զայն իմ վաղեմի բարեկամ բժ. Արամեանցին իբրև նուէր և յիշատակ. և իբրն գրգիռ նորանոր հետազօտութեանց և քննութեանց։

— Ի մօտոյ մի քանի խօսք ևս. պարոն Եր. Շահազիզեանի «Լումայ»-ի մէջ Տ. Գաբրիէլ Պատկանեանի վրայ գրած դիտողութեանց մասին պիտի գրեմ, եթէ Տէր կամեցի։

ՅՈՎՀ. ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ

Տպագրելով ներկայ նամակը՝ մենք մեր ասելքը այս խնդրի նկատմամբ առջ կրեղենք հետեւել համարում։ ԽՄԲ.